

Սեպտեմբեր 20, 1978

Հոգեշնորհ
Տ. Արշէն Վրդ. Այվազեան
Հովիւ Ս. Ծրրորդութիւն Եկեղեցւոյ
Չելթընհամ.

Հոգեշնորհ Հայր Սուրբ,

Համեցէք ներփակ գտնել Առաջնորդ Արքայան Հօր խօսքը՝
ուղղուած Չելթընհամի Ս. Ծրրորդութիւն Եկեղեցւոյ հա-
մայնրին:

Յաջողութեան լաւագոյն մաղթանքներով,

Խորին յարգանքօք

Նուպար Քիւփէլեան
Քարտուղար

**ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐՐԱԶԱՆԻ ԽՕՍԵԸ
ՉԵԼԹԸՀԱՄԻ Ս. ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ ԵՎԵՂԵՑԻՈՑ ՀԱՄԱՅՆՔԻՆ**

Այսօր Չելթընհամի Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ մեր հոգեւոր զաւակները ցնծութեան մէջ են: Երկար ժարիներու տքնաջան եւ սպառիչ աշխատանքներն ու մտահոգութիւնները ի վերջոյ տուած են իրենց բարերար արդիւնքը: Այսօր տեղի կ'ունենայ Եկեղեցւոյ պարտամուրհակի հրկիզման հանդիսութիւնը: Նշանակալից յաղթանակ մըն է այս Չելթընհամի մեր համայնքին համար:

Հայ ժողովուրդը, ուր որ ալ գտնուած է, իր առաջնահերթ պարտականութիւնը համարած է կառուցանել Աստուծոյ Տունը՝ հոն յամախող հաւատացեալներուն ջամբերու համար Տիրոջ կենարար խօսքը եւ անոնց փոխանցելու մեր Եկեղեցւոյ նախահայրերու ոգին: Որովհետեւ Եկեղեցին, մեզի համար, իր արտաքին կառոյցէն աւելի՝ եղած է եւ է ճեղքնոցեմարանգոսթեանց զանձարանը եւ ազգային ու ճշակութային արժօքներու պահպանը: Եւ մեր հոգեւոր եկեղեցիին հիմերը անխորտակեփի եղած են դարերու ընթացքին՝ որովհետեւ անոնք կառուցուած են Յշմարիտ ու մեր երանելի նախահայրերու անխախտելի հաւատքին վրայ:

Եւ այսօր, նոր հանգրուանի մը սեմին, մեր գլխաւոր մտահոգութիւնը պէտք է ըլլայ՝ միշտ բաց պահել հաւատքի ու ազգային գիտակցութեան տէր նուիրեալներու ջանքերով իրագործուած Աստուծոյ այս Տունը՝ հոն հաւաքելով աւելի ու աւելի թիւով հաւատացեալներ, եւ մանաւանդ ուխտելով շարունակել սկսուած այս բարի գործը՝ Աստուծոյ փառքին եւ մեր համայնքի բարօրութեան համար:

Մեր սրտաբուխ մաղթանքն է որ Աստուծոյ օրհնութիւնը անպակաս մնայ Չելթընհամի Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ մեր համայնքին վրայ, եւ Հոգեւոր Հովիւ, Ժխական Խորհուրդ ու եկեղեցական կազմակերպութիւններ միշտ ծաղկուն պահեն համայնքի հոգեւոր, կրթական, մշակութային ու ազգային թեանքը:

Սիրոյ ողջունիւ

**ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵԳԻՍԿՈՂՈՍ
Առաջնորդ**

Հոկտեմբեր 22, 1978

Քիւ 26001

Սեպտեմբեր 5, 1978

Նորին Սուրբ Օծութիւն
Տէր Տէր Վազգէն Առաջին
Սրբազնագոյն Կաթողիկոս Ամենայն Հայոց
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին.

Վեհափառ Տէր,

Տարւոյս Հոկտեմբեր 22ին Ձէլթընիւմ Փէնսիլվանիոյ Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ ծխական Խորհուրդը վայել հանդիսութեամբ պիտի կատարէ Եկեղեցւոյ պարտամուրհակի հրկիզման արարողութիւնը:

Փափաք յայտնուած է մեզի՝ ինչոքել Ձերդ Աքրութենէն որ համայնքի այս պատմական հանդիսութեան առթիւ բարեհաճիք Օրհնութեան Գիր մը շնորհել:

Հաճեցէք ներքակ գտնել Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ Տ. Արշէն Վրդ. Այվազեանի Օգոստոս 22, 1978 թուակիր նամակին պատճէնը:

Մեծապէս շնորհակալ պիտի ըլլանք եթէ Ձերդ Սրբութիւնը ընթացք տայ ներկայացուած ինչոքանքին:

Մատչիմք ի համբոյր Վեհիդ Օծեալ Աջոյն
Խոնարհաբար

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵԳԻՍԵՈՐԳՈՍ
Առաջնորդ

HOLY TRINITY ARMENIAN CHURCH

101 ASHMEAD ROAD, CHELTENHAM, PENNSYLVANIA 19012 • (215) 379-2515

THE VERY REVEREND ARSHEN AIVAZIAN, PASTOR

Օգոստոս 22, 1978


Գերշ. Տ. Թորգոմ Արքեպս. Մանուկեան
Բարեխնամ Առաջնորդ Հիւս. Ամերիկայի
Արեւելեան Թեմին,
Կիւ Եօրթ, Կ.Ե.

Գերշ. Սրբազան Հայր,

Ինչպէս ծանօթ է Սրբազանութեանդ, տարւոյս Հոկտեմբեր 22-ին եկեղեցւոյս համայնքը յատուկ տօնախմբութեամբ պիտի նշէ իր պարտամուրհակի վերացման առիթը: Արդարեւ խնդութեան առիթ է այս մեզ համար, որովհետեւ կ'իրականանան 12 տարիներու երազը եւ կ'արդիւնաւորուին մեր ժողովուրդի եկեղեցաշէն եւ ազգանուէր աշխատանքը: Կը խնդրենք Սրբազանութենէդ, որպէսզի այս ուրախ եւ երջանիկ առիթով միջնորդէք Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի մօտ, որպէսզի հաճի Օրհնութեան Գրով մը մեզի տալ իր Հայրական օրհնութիւնն ու պատգամը ի քաջաւերութիւն մեր ազգանուէր եւ եկեղեցաշէն համայնքին:

Սրբազան Հայր, ծանօթ է ձեզի համայնքիս պատմութիւնը, թէ ինչպիսի դժուար պայմաններու տակ վերակազմուած է ան 1930-ական թուականներու պառակտիչ եւ ցաւալի դեպքերէն ետք: Հակառակ բոլոր անպատասաւ պայմաններու եւ ի գին ծանր գոհողութեանց, Ս. Երրորդութիւնն եկեղեցւոյ հաւատարիմ զաւակները տիրացած են դարձեալ իրենց սեփական շէնքին: Դժբախտաբար սակայն անակնկալ հրդեհ մը փճացուցած է ամէն բան 1964 թուականին, անգամ մը եւս անտուն թողեւով մեր հաւատացեալները: Կոյնիսկ այս անփոխարինելի կորուստը չէ կրցած ընկճել հայու աննուաճելի ոգին, եւ մեր ժողովուրդի զաւակները դարձեալ ի մի հաւաքուած, ձեռք ձեռքի եւ սիրտ սիրտի, յաջողած են կառուցանել ներկայի գեղեցիկ շէնքը, Չէլթընհէմ քաղաքի գեղեցիկ մէկ բարձունքին վրայ, հայկական ճարտարապետութեան աւանդական ոճով եւ արդիական բոլոր յարմարութիւններով: Այժմ Ս. Երրորդութիւնն եկեղեցին իր համալիրով կեդրոնն է մեր համայնքային եկեղեցական եւ մշակութային կեանքին եւ մեր ժողովուրդի հպարտութեան եւ պարծանքի առարկան:

Սրբազան Հայր, թէեւ անցեալի տխուր իրադատութիւնները կը մնան մեր տարեգրութեանց մէջ որպէս անբաղձալի դեպքեր, սակայն մեր համայնքը իր պատմութեան էջերուն մէջ կը հաշուէ նաեւ առիթներ որոնք իրենց անշնչելի հետքերը թողած են բոլորին մտքին մէջ: Տակաւին թարմ են մեր հաւատացեալներուն սրտին եւ յիշողութեան մէջ Ազգիս Վեհափառ Հայրապետին օրհնաբեր այցելութիւնը մեր եկեղեցին 1968 թուականին: Բոլորին համար այդ օրը կը մնայ որպէս այն օրը երբ մեր ժողովուրդի դարաւոր պատմութիւնը կամրջուեցաւ ներկային հետ անփոխտելի հիմերով: Ահա այս ոգիով, եւ Ս. Իշմիածնի հաւատարիմ մնալու ուխտով է որ Ս. Երրորդութիւնն եկեղեցւոյ համայնքը պիտի շարունակէ իր գոյութիւնը ի միխթաութիւն մեր հաւատացեալ ժողովուրդին եւ ի փառս Աստուծոյ:

Մատչեւով ի համբոյր Ս. Աշոյշ,
Մնամ միշտ Աղօթակից,

Առէն Վրդ. Այվազեան
Հոգեւոր Հովիւ

Ս. ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻ